ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվականի N 415-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ 14 ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ, 28-րդ, 30-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3,1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ցանկի 2-րդ կետի դասակարգումները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի 15-րդ փողոց, 14 տուն հասցեի անշարժ գույքի համասեփականատեր Սամվել Վարազդատի Պետրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի 15-րդ փողոց, 14 տուն հասցեի, 08-051-0031-0002-008 կադաստրային ծածկագրով, 296,4 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի նշանակության օժանդակ շինության գործառնական նշանակությունը փոխել բնակելի տուն գործառնական նշանակություն:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 416-Ա

<<30>> մայիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «Մ.ԻԳԻԹՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 199-Ն որոշման առաջին կետի N 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Մ. ԻԳԻԹՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը **որոշում եմ՝**

1.«Մ. ԻԳԻԹՅԱՆ» (հարկ վճարողի հաշվառման համար՝ 06105587, իրավաբանական անձի հասցե՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, գյուղ Ձորակապ, 2 փողոց, տուն 13, գործունեություն ծավալելու հասցե՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի Մայիսյանի խճուղու սկզբնամաս) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել հեղուկացված ածխաջրածնային գազի վաճառք իրականացնելու թույլտվություն՝ 2023 թվականի հունիսի 01-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մ. ԻԳԻԹՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

30 մայիսի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2023 թվականի թիվ 417-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՔ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 16-ի թիվ 40-Ա որոշումը, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման հավելվածով ըստ լոտերի ներկայացված հողամասերի օտարման նպատակով, 2023 թվականի հուլիսի 07-ին, ժամը 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Գյումրիի խճուղի, 42 շենք) կազմակերպել աճուրդ:

2.Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքէջում, Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում, Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների, տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների մասին:

3.Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«31» մայիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
մայիսի 31-ի թիվ 417-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոտի համարը	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օտարման նպատակը	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)	Աճուրդի նախավճարի չափը (ՀՀ դրամ)
						Հողի կարգը	Ջրովի, անջրդի			
1.	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գ.Ազատան	08-004-0687-0011	Գյուղատնտեսական	Վարելահող	0.38792	3-րդ	ջրովի	Որպես վարելահող	580000	290000
2.	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գ.Բասեն	08-084-0302-0006	Գյուղատնտեսական	Վարելահող	1.13855	4-րդ	անջրդի	Որպես վարելահող	610000	305000
3.	ՀՀ ՇՄ Ախուրյան համայնք, գ.Բասեն	08-084-0302-0007	Գյուղատնտեսական	Վարելահող	1.05458	4-րդ	անջրդի	Որպես վարելահող	570000	285000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2023 թվականի N 418 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 209-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներով, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի տարածքում գտնվող 08-053-0008-0020 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինությունները օրինական ճանաչելու մասին» թիվ 209-Ա որոշման նախաբանում «հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:» բառերից և կետադրական նշանից հետո տեքստը լրացնել «Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023DCNWSY ծածկագրով:» բառերով, թվերով և կետադրական նշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԻԳԻԹՅԱՆ**

«01» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2023 թվականի N 419-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0062-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՒՐՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի 08-007-0062-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն, որը մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան գյուղի բնակիչ՝ Վարդան Վարուժանի ՈՒրուշանյանը, ով 2023 թվականի մարտի 17-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող 0,01479 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ կառույց հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2022YQDDDH ծածկագրով, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցի պահպանումը չի խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0062-0002 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,01479 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 147,9 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և աստիճանավանդակը ճանաչել օրինական և այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:
2. Անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության իրավունքները ենթարկել պետական գրանցման:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և դրանով զբաղեցված հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած անձին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան գյուղի բնակիչ՝ Վարդան Վարուժանի ՈՒրուշանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Վարուժանի ՈՒրուշանյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԻԳԻԹՅԱՆ**

«01» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2023 թվականի N 420-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԺՈՐԺԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ կետի, 35-րդ կետի «գ» և «ե» ենթակետերի, 35.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որշման 2-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-119-0031-0004 կադաստրային ծածկագրով 0,09213 հեկտար մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Գևորգ Ժորժիկի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված 312,75 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը (հետագայում շինություն) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 16-ի թիվ 393-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել՝ Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմանբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, որոշում եմ՝

1. Օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված շինությունը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-119-0031-0004 կադաստրային ծածկագրով 0,09213 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինություններն իրականացրած քաղաքացի՝ Գևորգ Ժորժիկի Հակոբյանին:

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝
   1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 464747 (չորս հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ (312,75 x 20000 x 0,0743 = 464747):
   2) Արտադրական նշանակության շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը սահմանված է 337 Հայաստանի Հանրապետության դրամ: 0,09213 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 186287 (մեկ հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր ութսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ (921,3 x 337 x 0,6 = 186287):
   3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է 651034 (վեց հարյուր հիսունմեկ հազար երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:
   4) Սույն կետի 3-րդ ենթակետով ձևակերպված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
   5) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից գնման նախապատվության առաջարկն ընդունելու, սակայն 30 օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:
   6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ինքնակամ կառույցն իրականացրած քաղաքացի Գևորգ Ժորժիկի Հակոբյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«01» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2023 թվականի N 421-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-068-0002-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵ ԳԱՌՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հովիտ բնակավայրի 08-068-0002-0002 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում 1950 թվականին ինքնակամ կառուցվել է անասնաշենք, որը մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հովիտ գյուղի բնակիչ՝ Սերգե Գառնիկի Մկրտչյանը, ով 2023 թվականի մայիսի 26-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող 0,0308 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված անասնաշենքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ կառույց հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023VTUJUY ծածկագրով, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցի պահպանումը չի խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հովիտ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-068-0002-0002 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,0308 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 308 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական և այն համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:
2. 08-068-0002-0002 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0,0308 հեկտար մակերեսով անշարժ գույքի միավորին տրամադրել «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Հովիտ, 1-ին փողոց, 1/1» հասցեն:
3. Անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության իրավունքները ենթարկել պետական գրանցման:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և դրանով զբաղեցված հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած անձին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հովիտ գյուղի բնակիչ՝ Սերգե Գառնիկի Մկչտչյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերգե Գառնիկի Մկրտչյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԻԳԻԹՅԱՆ**

«01» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 422-Ն

« 01 » հունիսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 233-Ն որոշման 2-րդ կետի **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի՝ Բաժին 09 Խումբ 05 Դաս 1 «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի ընդամենը ծախսեր տողի «185947.8» հազար դրամ թիվը փոխարինել «184947.8» հազար դրամ թվով, այդ թվում ֆոնդային մասի «3500.0» հազար դրամ թիվը փոխարինել «2500.0» հազար դրամ թվով, որից «Շենքեր և շինություններ կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածի «3500.0» հազար դրամ թիվը փոխարինել «2500.0» հազար դրամ թվով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի՝ Բաժին 01 Խումբ 06 Դաս 1 «Ընդհանուր բնույթի այլ

ծառայություններ» ծրագրի ընդամենը ծախսեր տողի «396402.9» հազար դրամ թիվը փոխարինել «397402.9» հազար դրամ թվով, այդ թվում ֆոնդային մասի «233873.7» հազար դրամ թիվը փոխարինել «234873.7» հազար դրամ թվով, որից «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածի «6100.0» հազար դրամ թիվը փոխարինել «7100.0» հազար դրամ թվով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի բյուջեի՝ Բաժին 08 Խումբ 02 Դաս 4 «Այլ մշակութային կազմակերպություններ» ծրագրի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածի «4000.0» հազար դրամ թիվը փոխարինել «3700.0» հազար դրամ թվով, այդ թվում «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածի «0» դրամ թիվը փոխարինել «300.0» հազար դրամ թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

«01» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 423

<<02>> հունիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0133-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,46353 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՋՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 57 որոշումը, Մարմաշենի համայնքապետարանում 2019 թվականի հունիսի 12-ին կայացած մրցույթի արդյունքի վերաբերյալ կազմած 2019 թվականի հունիսի 12-ին թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները, համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 04-ի թիվ 216 որոշման 1-ին կետի դրույթները և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 56-րդ և 58-րդ կետերի պահանջների որոշում եմ՝

1"Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 0133-0004 կադաստրային ծածկագրով, ջրային նշանակության 0,46353 հեկտար մակերեսով հողատեսքը ջրաօգտագործման գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով, 31900 Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարի դիմաց տրամադրել վարձակալությամբ անցկացված մրցույթում հաղթող ճանաչված

քաղաքացի՝ Հովհաննես Վոլոդյայի Գրիգորյանին (նույնականացման քարտ 001374156, տրված <<28>> դեկտեմբերի 2011 թվականին, 030-ի կողմից):

2"Որոշման 1-ին կետով սահմանված պայմաններով կնքել հողամասի վարձակալության իրավունքով տրամադրման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 հունիսի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 424

<<02>> հունիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0133-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,46353 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՋՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 57 որոշումը, Մարմաշենի համայնքապետարանում 2019 թվականի հունիսի 12-ին կայացած մրցույթի արդյունքի վերաբերյալ կազմած 2019 թվականի հունիսի 12-ին թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները, համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 04-ի թիվ 216 որոշման 1-ին կետի դրույթները և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 56-րդ և 58-րդ կետերի պահանջների որոշում եմ՝

1"Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 0133-0002 կադաստրային ծածկագրով, ջրային նշանակության 0,20799 հեկտար մակերեսով հողատեսքը ջրաօգտագործման գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով, 14300 Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարի դիմաց տրամադրել վարձակալությամբ անցկացված մրցույթում հաղթող ճանաչված

քաղաքացի՝ Հովհաննես Վոլոդյայի Գրիգորյանին (նույնականացման քարտ 001374156, տրված <<28>> դեկտեմբերի 2011 թվականին, 030-ի կողմից):

2"Որոշման 1-ին կետով սահմանված պայմաններով կնքել հողամասի վարձակալության իրավունքով տրամադրման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 հունիսի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 425

<<02>> հունիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ <<ՄԱՐՄԱՇԵՆ ՁՈՐ>> ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի լիազորված անձի՝ Ալբերտ Դերձակյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի՝ 26.05.2023թ. ժառանգության գործ թիվ 834 հիման վրա ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը պայմանագրով Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի անունով վերաձևակերպելու մասին **որոշում եմ՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի <<Մարմաշենի ձոր>> կոչվող տարածքում գտնվող Ռուդիկ Խաչատուրի Խաչատրանին /մահացած 2021 թվականի դեկտեմբերի 24-ին/ վարձակալության իրավունքով տրամադրված 2.9 հա ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը վերաձևակերպել ըստ օրենքի ժառանգություն ընդունած ժառանգ՝ Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի անվամբ /ծնված՝ 1957 թվականի դեկտեմբերի 22-ին, անձնագիր՝ 45 06 953385 տրված՝ 2003 թվականի նոյեմբերի 10-ին, ստորաբաժանման կոդ 772-037/, 04.09.2002թ. սեղանամատյան թիվ 270 կնքված պայմանագրի մնացած պայմանների առանց փոփոխության, (հողամասի յուրաքանչյուր

տարվա վարձավճարի չափը՝ 15500 /տասնհինգ հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալության պայմանագրի ժամկետը՝ մինչև 04.09.2101թ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 հունիսի 2023 թվականի
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 426

<<02>> հունիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՅՈՒՂԱՊ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 631-Ն որոշման կանոնադրության 9-րդ կետի, 14-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության մշտական գործող հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 16-ի թիվ 3 արձանագրության հերթական նիստի դրական եզրակացությունը և հաշվի առնելով Մելանյա Սարգսյանի դիմումը՝ իր քրոջ՝ Յուղապ Սարգսյանի նկատմամբ պատրոն /օգնական/ նշանակելու խնդրանքը **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի բնակիչ, 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ, սահմանափակ գործունակ, կողմնակի անձի մշտական խնամքի կարիք ունեցող՝ Յուղապ Ռաֆիկի Սարգսյանի /ծնված՝ 1954 թվականի մայիսի 14-ի/ նկատմամբ քրոջը՝ Մելանյա Ռաֆիկի Սարգսյանին նշանակել պատրոն /օգնական/:

2.Որոշման մեկ օրինակը տրամադրել Մելանյա Սարգսյանին:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ախուրյան համայնքի Հացիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Նահապետյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 հունիսի 2023 թվական
Գյուղ Ախուրյան